№ 193 Նոյեմբերի 1 (13) 1880 Նոյեմբերի 1 (13) № 193

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարւոյնը 6 րուբլի:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրւում են միմիայն խմբագրատան մէջ:
Ստորագրագրւոյթը լսում են ուղղակի
Տիֆլիս. Редакція «Мшака»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւնը ընդունւում է ամեն ժամում:
Յայտարարութիւնների համար վճարւում են
իւրաքանչիւր տառի 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայ ուսանողական քրմապաշտութիւնը:—Նոր բրին տեսութիւն: Հայոց Քառօրն: Համակ Ախալցխայից: Համակ Խմբագրին: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Գերմանիա: Թէյբրիա—«Մշակի» ճն ոգիները:—Յայտարարութիւններ:

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ԿՐՕՆԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ

—

«Մշակը» հինց նոր խօսեց մայրաքաղաքներում կրթւող հայ ուսանողների քրմապաշտութեան վրա: Այդ այլանդակ գիծը այնքան բնական է եւ յատուկ հայ ուսանողի բնաւորութեանը, որ անկարելի է երկու խօսք չասել այդ անճոռնի երեւոյթի մասին:

Հայ մանուկը մեծանում է մի հրէշաւոր բնութեան գրկի մէջ, որտեղ մուշտին, մորակը, տուր ու թրմբրոցը դաստիարակութեան գլխաւոր գործօններն են համարւում: Գուցէ ամէն բնութիւն չէ ենթարկված այսպիսի տգեղ պայմաններին, բայց չը կայ հայ բնութիւն, որի մէջ չը տիրապետէ բարբարոսութիւնը մի ուրիշ, աւելի զգուելի ձեւով Հօր ժանգոտած ու հոգեմաշ վարվողութեան ձեւով, մօր ճղճղան եւ գնչուական անկիրթ բնաւորութեամբ, սորա նորա, մանող-գնացողի կոպիտ ու ստորացնող ձեւերով:

Ի՞նչ է յիրաւի Թիֆլիսի և գաւառների հայ կինը առհասարակ. նա կամ բօշայի բարքով, բայց արտաքին կեղծ համեստութեամբ ծածկված մի զգուելի արարած է, կամ թէ կոպիտ ու գրաստանման մի էգ, որից այնչափ հեռու է ազատ հոգին, որչափ նուրբ զգացմունքը, նոյնպէս նորան խորթ է վայելուչ վարվողութիւնը, որչափ մարդավայել ու ազնուացնող յարաբերութիւնները: Հայ կինը գլխաւորապէս ամբիծած է թմրոցի ու տգամարդի դաժանութեան երկիրզից, մեղմ է և խոնարհ միայն իրան ճնշող ուժի առաջ, այլ խիստ է, կծու ու բիրտ իրանից կախված թոյլ էակի հետ, վանողով և նա բնաւ ընդունակ չէ ներշնչել իր որդու մէջ անկախ բնաւորութիւն, ազատ և զարգացող միտք ու վեհ յատկութիւններ: Գուցէ մեզ ասեն թէ մայրաքաղաքների հայ ուսանողները բոլորն էլ կովկասեցի չեն, բայց միթէ մեծ տարբերութիւն կայ կովկասեցի հայի և այն հայի մէջ, որը ապրում է Կովկասից դուրս:

Հայկական ընտանեկան ազգեցութեան տակ այլակերպված հայ մանուկը մնում է ուսումնարան: Ի՞նչ պայմանների մէջ է մնում նա և ի՞նչպէս ընթանում: Նա անպատրաստ է, նա չղկվում է, մոքով ու մարմնով ստրկանում է, նա տանջվում է, նա թոռչնում է իր բնական մեծութիւնից, վանողով կամ յատահատված ձրգում է իր պարապմունքը պիմ նպատակի միջին դասատուներից մեկում, կամ թէ մի կերպ աւարտում է իր ընթացքը և ուղղորդում մայրաքաղաքները ուսումը շարունակելու համար:

Հասել նա դառնում է, բան երեւութին, բաւական վայելուչ դիրք ունեցող մարդ, որովհետև կրում է բարձրագոյն ճեմարանները մտած յաղթերից մէկի անունը, որով վաղը նա արդէն լեհարանակը քաղաքացի պիտի համարվի: Նայց հնարի ն է արդեօք մի հրաշագործ ու գերբնական եղանակով կերպարանափոխել, վերածնել տալ ուղղել վերականգնեցնել հինց մի փոքր բարեկերպել այն հոգին, այն միտքը, որոնք մինչև քան և երէց տարեկան հասակը արդէն ընկճվել են, մաշվել, ջարդվել, սեղմվել ու տրորվել ընտանեկան սանիչ և խեղդամահ բարոյական ազդեցութեան տակ:

Ահա այս տեսակ անհատներ են կազմում մեծ մասամբ այն հնդանիզէնտը, որ ասում է «Հայկական ապագայ ինտելիգենցիա»:

Ի՞նչ է էք պահանջում դուք այսպիսիներից. ինքնուրոյն գործ, անկախ համոզմունք, ազատ բրնաւորութիւն, առողջ ու սուր դատողութիւն, մէկին կարօրէն չեմեթարկվել, նորա հետ վիճել և իր սեփական կարծիքները ուղղութիւնը ունենալ... բայց օրտեղից, ի՞նչ աղբիւրից... Վանողով բնաւ զարմանալի չէ, որ որ և իցէ մի հնչեն, ասոր ու թշտաւ մարդու քրմութիւնը եղել է միշտ հայ ուսանողութեան անհրաժեշտ պահանջը...

Այժմ ասում են թէ մայրաքաղաքում հայ ուսանողութիւնը ուղղում է դէպի գաղ յետ կանգնել քաղաքի ժանտահոտ ու ապականել քաղաքի ազդեցութիւնից: Ի հարկէ երկու չարիքներից միշտ փոքրագոյնն է նախապատուելի, բայց նոյնպէս հարկաւոր է մտածել թէ ի՞նչ ասել է հայ ուսանողի անկախութիւնը, երբ նա մինչև հասակ տարիքը եղել է մոքով ու հոգով մի կատարեալ աւտոմատ, չէ իմացել ինչ ասել է ապրել իր խելքով, ծխատել իր կամքով, խօսել իր համոզման ու բնական տրամադրութեան մէջ, գործել ինքնուրոյն համոզմունքով և անօրինել իր կամքը իր սեփական որոշմամբ: Հայ ուսանողը, որը չունէ մի որ և իցէ քաղաքական, պիտի անչուշտ ներկայացնէ մի աւելի ողբալի տիպ. նա պիտի երկրպագէ այսօր այս ուղղութեանը, վաղը մի ուրիշ, այսօր պիտի շատ խելացի և գործնական կարծէ այն, ինչ վաղը երազական և ֆիմար պիտի թվայ նրան. այսօր մեծարարքան պիտի խրոխտայ և չը գիտեմ ի՞նչ փրանչներով ու ի՞նչ ախորհանքերից տրաքացնէ, իսկ վաղը փոքրանայ և ընկնի ամենանեղ և սահմանափակ ինտելէկտների հետից. այսօր պիտի հերքէ ու չը ճանաչէ ամենաբարձր հեղինակութիւններ, իսկ վաղը պաշտէ ու համբուրէ առաջին պատահածի դարշապարները: Վերջապէս այսպիսով այսօր նա կը պատկանի ինտելիգենտ դասակարգին, իսկ վաղը չինովնիկ, պրիկաշչիկ, կամ ամենամեծ շրջանին....

Ահա ինչ է այն ուսանողութիւնը, ի հարկէ խօսք չէ կարող լինել բացառութիւնների մասին, — որի վրա դնում է ազգը իր ապագայի յոյսը. ահա այն շրջանը, որի վրա նայելիս նոյնչափ վիրաւորում է մարդու վայելուչ զգացմունքը, որչափ և ցաւում է նրա սիրտը... Չի՞ որ դեռ շատ սեռ բանտներ պիտի անցնեն, դեռ շատ կարգեր պիտի փոխվեն, մինչև որ ազգը տեղիք ունենայ իր մուտը դասակարգից էական արդիւնքներ սպասել: Չի՞ որ բաւական հետաքրքրաշարժ է, որ հինց այսպիսիներից է բաղկացած այն դիւպլոմատ մտաւորականների դասակարգը, որոնք մինչև ալեւորվելը մնում են միշտ բթացած գիմնազիստ, մինչդեռ ամենատամեղ կերպով ցանկութիւն են յայտնում լինել ժողովրդի առաջնորդ և գաղափարի քարոզիչ: Այո, այս կարող է միայն հայոց մէջ լինել...

Այս մի քանի տողերով դեռ մենք շատ քիչ ասեցինք հայ ուսանողութեան ոչնչութիւնը իր բովանդակութեամբ ներկայացնելու համար:

Գաս. Եղուբեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՔԱՌՕՐԱՆ

—

Ջարմանալի բնաւորութիւն ունէն մեր հասարակութեան մէջ գործող համարեա անձինք, ուզում եմ ասել, եւրոպական ձեւով սասձ՝ ինտելիգենցիա կոչված մասը հասարակութեան: Լրագրութիւնը գործել խոզակիչ և հասարակութեանը համարել մի գլուխ, որին կարելի է ամեն բան բարձել, այս նրանց նշանաբանը: Չունէն մի մարդ, որ գրիչ չարժել գիտէ, գուցէ և անցել է մի ուսումնարանի միջով, տեսել է նաեւ համալսարանի երես, գառնում է երեւելի հրապարակաբոս, հասարակական հարցիր վճռող: Մի երիտասարդ, որ չը գիտէ հետաքրքրի բուն նշանակութիւն, անգամ դերասանութեան հետ ծանօթութիւն չունէ, այլ մի քանի խօսք միմանց եաւից կապել գիտէ, միայն գրիչ չարժել գիտէ, բայց և ունի մի որ և է սաղ նպատակ, նա գառնում է հետաքրքրի քննութիւն գրող՝ րեցկեդեան: Չունէ մի հարցում երեւան գալ և որոշումներ անել հասարակութեան առաջև, վճիռներ կարդալ պէտք է անէ այն անձը մեր հասարակութիւնից, որ գոնէ տեղեկութիւն ունէ, հասկացողութիւն ունէ իր գաւառ առարկայի վրա, եթէ չանէք էէ, նա պէտք է մանագէտ լինի: Ի միջի այլոց մի քանի եւրոպական բառեր խառնել, չէ նշանակում էէ քաղ ծանօթ ես, տեղակ ես այդ բանին: Ենթէ ընդունում ենք, որ լրագրութիւնը հասարակական ամբիոն է, հետևապէս և մարդ պէտք է խօսա անկողմնապահ լինի իր ընտրած հարցում, պէտք է գոնէ հասարակութեան պատիւը պահպանել և լրագրութեան արժանաւորութիւնը գնահատել: Հակառակ դիպուածում կը նշանակէ նա ծաղրում է հասարակութեանը և իրան նրանից շատ բարձր գասելով՝ կամենում է իր կարծիքը ընդհանուրի կարծիքի տեղ ընդունել տալ և հասարակութեանը իր հաճոյքին խաղալիք դարձնել: Տաբարագրգռիչ, շատ ցաւելով պէտք է ասած, որ մեր հասարակութեան ինտելիգենցիան վարակված է այդ պատով և չը հասկանալով իրանց պաշտօնը, բան որում նրանք ազգի դեկավարներն են համարվում, խիստ ծանր ընթացք են տալիս գործին իրանց այդ տեղ հրապարակաբոսութեամբ: Խօսքս մանաւանդ Հայաստի է, որ տեսանելի է Ա-ից Հայոց գերասանական մտաւոր խառնը ակից իր ներկայացումները Համարային թատրօնում և մինչև այսօր ներկայացած պիեսաները իրանց քննադատութիւններով տպվել են «Մեղուս» մէջ: Ընդհակ տարբեր բրեցկեդիա գրողը Ի-ենեան էր, որ յայտնի է էէ ինչ տեսակ բրեցկեդիաներ էր գրում: Ընդհակը անցել է, նրա վրա խօսելը տափարդ է: Ի-ենեանը յայտնեց, որ այս տարի բրեցկեդիա չէ գրելու: Այժմ «Մեղուս» մէջ գալու են եկել մի քանի բրեցկեդեաններ: Առաջ և ***. Առաջի գրուածքի ձեւից և նրա լեզուի ոճից պարզ երեւում է, որ դա նոյն Ի-ենեան է, հետաքրքրական այս այս-